

**Արագածոտնի մարզպետը մասնակցեց «ԱրմՊրոդԷքսպո» միջազգային  
մասնագիտացված ցուցահանդեսին**

Արագածոտնի մարզը ներկայացուցչական կազմով մասնակցեց Գյուլատնտեսության աշխատողի օրվան նվիրված «ԱրմՊրոդԷքսպո 2015» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին:

„Արագածոտնի մարզ,, տաղավարում ներկայացված էին մարզում արտադրվող գյուղատնտեսական արտադրատեսակները՝ կաթնամթերքներ, մսամթերքներ, մրգեր, բանջարեղեն, ավանդական մշակաբույսեր, ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային ըմպելիքներ, անուշեղեն, պահածոներ եւ այլ մթերքներ: Հետաքրքիր ձեւավորումներով ցուցադրված էին ազգային կերակրատեսակները, կոլորիտային երանգավորում ունեցող պատկերներ:

Ցուցահանդեսի առաջին օրը տաղավարում ներկա էր մարզպետ Սարգիս Սահակյանը: Այստեղ նա դիմավորեց ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին եւ ներկայացրեց գյուղատնտեսության ոլորտում մարզի այս տարվա ձեռքբերումները: Ի դեպ, տաղավարում, մեծադիր պաստառի վրա ներկայացված էին ոլորտի բոլոր ցուցանիշերը, որոնք, ընդհանուր առմամբ, բարձր են նախորդ տարիների համեմատ:

Մարզի ներկայացուցիչները մասնակցեցին նաեւ «Հայագրոֆորում» համաժողովին: Խումբը բաղկացած էր 30 անդամից, որոնց մեջ էին համայնքի ղեկավարներ, գյուղատնտեսության ոլորտի լավագույն մասնագետներ, ֆերմերներ: Գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի եւ բեղմնավոր աշխատանքի համար երկու մասնակցի հանձնվեց ՀՀ գյուղնախարարության ,, գյուղատնտեսական նվաճումների համար,, ոսկե մեդալ, եւ երկուսին՝ շնորհակալագիր:

Մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին